Արձանագրություն N 3

Առողջապահության նախարարության 2019 թվականի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/18» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «07» «օգոստոս» 2019թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ Ա. Պետրոսյան, Է. Կաբասակալյան

Հանձնաժողովի քարտուղար Հ. Սարգսյան
Բացակայում էր Մ.Յախշյանը:

1. Հայաստանի Հանրապետության ՊԵԿ հարցում ներկայացնելու մասին

(Ա. Պետրոսյան)

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով հարցում է ներկայացվել ՀՀ ՊԵԿ: Հարցման պատասխանը ստացվել է 06.08.19թ., ըստ որի «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի, «Վիոլա» և «Լինարե» ՍՊԸ-ների ֆինանսական չափորոշիչները գնահատվել են բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

2. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Ա. Պետրոսյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ որոշվել էր առաջարկել առաջին տեղ զբաղեցնող մասնակիցներին ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը (առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը)՝ «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ի, «Վիոլա» և «Լինարե» ՍՊԸ-ների որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացվել են 05.08.19թ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

3. Ընթացակարգի ամփոփման մասին

(Ա. Պետրոսյան)

1. Հիմք ընդունելով մասնակիցների կողմից ներկայացված հայտերը, «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթղթերը և ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված եզրակացությունը.

1. Որոշվեց «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/18» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել և հաղթողներ ճանաչել.

1. «Կոնցեռն Էներգոմաշ» ՓԲԸ-ին՝ 1,2, 4-9, 17-24, 26-39, 41-51, 53-59 չափաբաժինների մասով՝ 12,228,878 դրամ պայմանագրային գումարով:

2. «Վիոլա» ՍՊԸ-ին՝ 11,12,13,14,15,60,61,66,69 և 70 չափաբաժինների մասով՝ 7,710,000 դրամ պայմանագրային գումարով:

3. «Լինարե» ՍՊԸ-ին՝ 62,63,64,65,67 և 68 չափաբաժինների մասով՝ 183,050 դրամ պայմանագրային գումարով:

2. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը, **որոշվեց** «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/18» ծածկագրով գնման ընթացակարգի անգործության ժամկետ սահմանել 2019 թվականի օգոստոսի 9-ից մինչև 2019 թվականի օգոստոսի 13-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

3. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԳՀԱՊՁԲ-2019/18» ծածկագրով գնման ընթացակարգի 3,10,16,25,40,և,52-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Անդամներ՝ ---------- Ա. Պետրոսյան

---------- Է. Կաբասակալյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան